- Գյումրի քաղաքի Բորյան փողոց N2/5 հասցեի, օրինականացված 30.75 (երեսուն ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (27.23(քսանյոթ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի շինությունը՝ 251381 (երկու հարյուր հիսունմեկ հազար երեք հարյուր ութսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյաններին:
- Գյումրի քաղաքի Բորյան փողոց N2/5 հասցեի 30.75 (երեսուն ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 323306 (երեք հարյուր քսաներեք հազար երեք հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյաններին:
- Քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյաններին տրամադրել կիսակառույց շինություններն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու վերաբերյալ տվյալներով:
- Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյանները պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
- Առքավաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյանների միջոցների հաշվին:



27.03.2023

X *[Signature]*

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » *Տեպրեմբեր* 2023 թվականի N 758-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ
N 4/4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 4/4 հասցեի հողամասը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Արման Արթուրի Մազմանյանին և Անահիտ Գարեգինի Կարճիկյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29122022-08-0056 վկայական):

Քաղաքացի Արման Արթուրի Մազմանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Անահիտ Գարեգինի Կարճիկյանին պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 4/4 հասցեի 738,21 (յոթ հարյուր երեսունութ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Արման Արթուրի Մազմանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մարտի 02-ին N 3498 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 4/4 հասցեի 738,21 (յոթ հարյուր երեսունութ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Արման Արթուրի Մազմանյանին և Անահիտ Գարեգինի Կարճիկյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
- Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ:

2023թ. ք.Գյումրի



27.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 27 >> Շաբաթ 2023 թվականի N 757-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՇՈՒՌԻԿ ՀԱՅԿԻ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ԱՐԶԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շուրիկ Հայկի Հակոբյանի 2023 թվականի մարտի 27-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Շուրիկ Հայկի Հակոբյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի մարտի 28-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր՝ 2023 թվականի մարտի 28-ից մինչև 2023 թվականի ապրիլի 03-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Շուրիկ Հայկի Հակոբյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Ռուդիկ Ֆելիքսի Իսրայելյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուրիկ Հայկի Հակոբյանին և Ռուդիկ Ֆելիքսի Իսրայելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » Տպարի 2023 թվականի N 456 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ
ՔԱՂԱՔԻ ՍԵՎԵՐՍԿԻ ԶՈՐԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐՃԻ ԲԱՑՈԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուիի Եղիազարյանի (ՀՎՀՀ՝ 57311905, գրանցման ամսաթիվը՝ 04.02.2016 թ.) 2023 թվականի մարտի 13-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 13-ին 4140 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուիի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Սևերսկի զորամասի հարևանությամբ իրականացնել սուրճի բացօթյա առևտուր:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի ապրիլի 9-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուիի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



23.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » Սեպտեմբեր 2023 թվականի N 755Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈԼԻ ՓՈՂՈՑ N 6 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 42,99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՋԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 126,66 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սուրեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող գյումրի քաղաքի Գոգոլի փողոց N 6 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 42,99(քառասուններկու ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել զբաղեցրած է 126,66(հարյուր քսանվեց ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառ.մ մակերեսով հողամաս որի վրա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Սուրեն Սահակյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի հիմք ընդունելով քաղաքացի Սուրեն Սահակյանի լիազորված անձ Ս.Մինասյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվ սեպտեմբերի 04-ին N 17909թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Սուրեն Մերուժանի Սահակյանի (ծնված 07.06.1958թ.)) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց N 6 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 126,66(հարյուր քսանվեց ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Սուրեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց N 6 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 42,99(քառասուններկու ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ս. Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



27.09.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » Եսպրի 2023 թվականի № 754-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի №2823-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Գյումրի ք. Պ. Պռոշյան փողոցի հարևանությամբ գտնվող 809.95 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1248-0001) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №2823-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում և որոշման կայացման մեջ «809.95» թիվը փոխարինել «786.30» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 27 » Սեպտեմբեր 2023 թվականի № 752-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԱՎԼԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ 73.4 ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 73.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի №667-Ա որոշումը ու քաղաքացի Պավլիկ Գևորգյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 4761 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի հարևանությամբ գտնվող քաղաքացի Պավլիկ Գևորգյանի սեփականության իրավունքը ճանաչված 73.4 քմ արտաքին մակերեսով բնակելի տանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 73.4 քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 54/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » Տարբ 2023 թվականի № 452-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ
131.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 131.4 քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 11/35:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Исходительная надпись

X CB

Գ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » Շաբաթ 2023 թվականի № 751-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՅԻ ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ 400 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքի 1991 թվականի հոկտեմբերի 29-ի N11 արձանագրությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 14-ի N613-Ա որոշումը ու քաղաքացի Էդուարդ Խաչատրյանի լիազորված անձ Սամվել Գևորգյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված N4682 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 1-ին փակուղու հարևանությամբ գտնվող քաղաքացի Էդուարդ Խաչատրյանին պատկանող 400 քմ մակերեսով հողամասին և դրա վրա առկա շինությունը տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, 31:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » *հունիս* 2023 թվականի № 750-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏԼՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ 73.37 ՔՄ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 335.06 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի № 668-Ա որոշումը ու քաղաքացի Անդրանիկ Ոսկանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 4880 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Սարուխանյան փողոցի հարևանությամբ գտնվող քաղաքացի Անդրանիկ Ոսկանյանի սեփականության իրավունքը ճանաչված 73.37 քմ ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 335.06 քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ԺԴԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 13/3:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 27 » Տարեք 2023 թվականի № 769 Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ, 39 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 9.46 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ
(ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1367-0009) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Հաղթանակի պողոտա, 39 հասցեի շինության հարևանությամբ գտնվող 9.46 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1367-0009) տրամադրել հասցե՝

ԳՅՈՒՄՐԻ Ք., ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ, 39/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » *Շուգրի* 2023 թվականի N 748-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶՄԻ
ՊՈՍԹ ԹԱՂԱՄԱՍ N 29/1 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1855-Ն որոշման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամաս N 29/1 հասցեի բազմաբնակարան շենքի զբաղեցրած 0,11768 (զրո ամբողջ տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսուներեք հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը տրամադրել շենքի պահպանման և սպասարկման համար, համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » Տարբեր 2023 թվական N 764-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ
ՌՈԶԱ ՎՈԼՈԴԻՄԻՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Զուլբերտի Խոցանյանը (անձնագիր՝ AR 0368804, տրված՝ 11.07.2017թ., 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Խորենացու փող. 26 շենք, թիվ 48 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի անունից (այսուհետ՝ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի փետրվարի 7-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Պարոնյան փողոց 44 հասցեի բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին որպես սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի հուլիսի 27-ի Շ-2070/4212/302 գրությունը, 2023 թվականի փետրվարի 24-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-184 գրությունը, «Գյումրու բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի մարտի 6-ի N 422 տեղեկանքը, Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի անձնագրի պատճենը, 2023 թվականի փետրվարի 10-ի «Գյումրի» ցանցի տեղեկանքը, Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Պարոնյան փողոց թիվ 44 հասցեի բնակելի տունը նվեր ընդունելու պատրաստակամության մասին, 2023 թվականի փետրվարի 2-ի Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության եզրակացությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի N 2295 –Ա հասցեավորման որոշումը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի փետրվարի 7-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի մարտի 9-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի լիազորված անձ՝ Արմեն Զուրբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գյումրի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Պարոնյան փողոց 44 հասցեի 24.84 (քսանչորս ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 30012023-08-0033 վկայական):

բ) Գյումրու/Լենինականի/ Պարոնյան փողոց 44 ֆոնդի տան հատկացման հիմքերը արխիվում չեն պահպանվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի հուլիսի 27-ի Շ-2070/4212/302 գրություն):

գ) Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց տուն 44 հասցեում հաշվառված բնակվում է քաղաքացի՝ Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանը 2022 թվականից: Հասցեում առկա է երկու տնատիրություն, որտեղ հաշվառված է նաև իննը անձ (հիմք՝ 2023 թվականի փետրվարի 24-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-184 գրություն և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԻ-ի 2023 թվականի մարտի 6-ի N 422 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացու կողմից 1998թ. մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Պողոսյան փողոց 38 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 6-ի N ԱՏ-06022023-99-0369 տեղեկանք):

ե) Քաղաքացի Ռոզա Մկրտչյանը /ք. Գյումրի, Պարոնյան 44 տուն/ Գյումրի ցանցում հանդիսանում է ենթաբաժանորդ Սոս Թորոսյանին 2002 թվականից միջև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի փետրվարի 10-ի տեղեկանք):

զ) Գյումրի համայնքի Պարոնյան փողոց թիվ 44 տան տեխնիկական վիճակը գնահատվում է «բավարար», (երկրորդ աստիճան), (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի փետրվարի 2-ի եզրակացություն):

է) Գյումրի ք., Հ. Պարոնյան փողոց, 44 հասցեի 29.01 քմ ընդհանուր մակերեսով բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած 29.01 քմ մակերեսով հողամասին համայնքի իրավունքները պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ Գյումրի ք, Հ. Պարոնյան փողոց 44:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության

շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

ՀՀ տարածքում 1998թ. մարտի 1-ից առ այսօր անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի կողմից կատարվել է Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Պոռչյան փողոց 38 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ: Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի լիազորված անձ՝ Արմեն Զուլբերտի Խոջանյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ

կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների, դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Պարոնյան փողոց 44 հասցեի 24.84 (քսանչորս ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին

ծնված 1961 թվականին

որպես սեփականություն :

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին;
4. Քաղաքացի՝ Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռոզա Վոլոդյայի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թիվ Գյումրի համայնք



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » *Տեպրեմբեր* 2023 թվականի N 746-Ա

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիել Սերվիսիս>> ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 21-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 21-ին 4719 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Էյթիել Սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 6/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի մարտի 11-ից մինչև 2023 թվականի մայիսի 10-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիել Սերվիսիս>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» Մայիս 2023 թվականի N 745-Ա

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, ՏԻԳՐԱՆ
ՄԵԾ 46 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիել Սերվիսիս>> ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 21-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 21-ին 4721 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Էյթիել Սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոց, Տ. Մեծ 46 հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի մարտի 01- ից մինչև 2023 թվականի ապրիլի 30-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիել Սերվիսիս>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » Տարբեր 2023 թվականի N 44 Ա

**ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԲՈՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ
7/1 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ)
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Բորիս Ղազարյանի 2023 թվականի մարտի 21-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 21-ին 4767 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Բորիս Ղազարյանին Գյումրի քաղաքի Գայի 7/1 ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 9.7 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի հունիսի 01- ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Բորիս Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



27.03.2023

ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27 » Զարգի 2023 թվականի N 443Ա

**ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՁԱՓԱՀԱՍ ԵՐԵՒԱՆԵՐ՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՐԵՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԻՆԵ
ՍՈՒՐԵՆԻ ՄԱՋՄԱՆՅԱՆԻ ԽՆԱՄՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի մարտի 6-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինն է դիմել Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց 18 տան բնակիչ՝ Արմենուհի Արմենի Մազմանյանը (անձնագիր՝ AR0252657, տրված՝ 03.04.2017 թվականին, 064-ի կողմից) հայտնելով, որ գտնվում է դժվարին իրավիճակում, չունի հիմնական բնակության վայր, աշխատանք և խնդրել է իր անչափահաս երեխաների՝ 15.11.2017 թվականին ծնված Հովհաննես Սուրենի Գալստյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ097021), 05.03.2019 թվականին ծնված Նարինե Սուրենի Գալստյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ094930) և 11.07.2020 թվականին ծնված Մարինե Սուրենի Մազմանյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ269478) խնամքը իրականացնել շուրջօրյա խնամքի հաստատությունում:

Ի նկատի ունենալով, որ անչափահաս երեխաները հայտնվել են ռիսկային իրավիճակում և հիմք ընդունելով քաղաքացի Արմենուհի Արմենի Մազմանյանի՝ 2023 թվականի մարտի 6-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 3666 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մարտի 22-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 15.11.2017 թվականին ծնված Հովհաննես Սուրենի Գալստյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ097021), 05.03.2019 թվականին ծնված Նարինե Սուրենի Գալստյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ094930) և 11.07.2020 թվականին ծնված Մարինե Սուրենի Մազմանյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ269478) խնամքը և դաստիարակությունը կազմակերպել «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում և տրամադրել շուրջօրյա խնամք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենուիի Արմենի Մազմանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » Շաբաթ 2023 թվականի N 42-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵԿՈՆ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԱՏԻ ՓՈՂՈՑ N 10 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 120.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 7.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ 4.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Լևոն Վազգենի Ոսկանյանին պատկանող (հիմք՝ սեփականության վկայագիր N 1019 տրված 11.10.1998թ.) Գյումրի քաղաքի Մարատի փողոց N 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 120.44(հարյուր քսան ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործում է 7.09(յոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որոնց վրա առկա 4.21(չորս ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Լևոն Վազգենի Ոսկանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի և 22.1 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Լևոն Վազգենի Ոսկանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի սեպտեմբերի 26-ին N 16991 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Լևոն Վազգենի Ոսկանյանի (ծնված 1958 թվականի հուլիսի 3-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մարատի փողոց N 10 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 7.09(յոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 4.21(չորս ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Լևոն Վազգենի Ոսկանյանին պատկանող Գյումրի քաղաքի Մարատի փողոց N 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 120.44(հարյուր քսան ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



24.03.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24 » օգոստոսի 2023 թվականի N 441-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ՍՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 44/1 ՀԱՄՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 36.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՔԱՑՎԱԾ 1(ՄԵԿ)ԼՈՒՍԱՄՈՒՏԸ, 1(ՄԵԿ) ՔԱՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՈՒՌ, 2(ԵՐԿՈՒ) ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՈՒՌ, 2(ԵՐԿՈՒ) ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ԴՈՒՌ, 2(ԵՐԿՈՒ) ԻՆՔՆԱԿԱՄ ՔԱՑՎԱԾ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ, 1(ՄԵԿ) ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՈՒՌ, 2(ԵՐԿՈՒ) ԻՆՔՆԱԿԱՄ ՔԱՑՎԱԾ ԴՈՒՌ, 2(ԵՐԿՈՒ) ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ԴՈՒՌ, 2(ԵՐԿՈՒ) ԻՆՔՆԱԿԱՄ ՔԱՑՎԱԾ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ, 1(ՄԵԿ) ԻՆՔՆԱԿԱՄ ՔԱՑՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սվետլանա Վլադիմիրի Սվազյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05122022-08-0035) Գյումրի քաղաքի Հ.Ավետիսյան փողոց N 44/1 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնական կառուցված է 36.49(երեսունվեց ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինություններ, ինքնական բացված 1(մեկ) լուսամուտ, 1(մեկ) բացվածքի ձևափոխված դուռ, լուսամուտ, 1(մեկ) բացածքի ձևափոխված դուռ, 2(երկու) դռան ձևափոխված լուսամուտ, 1(մեկ) լուսամուտի ձևափոխված դուռ, 2(երկու) ինքնական բացված դուռ, 2(երկու) ինքնական փակված դուռ, 2(երկու) ինքնական բացված լուսամուտ, 1(մեկ) ինքնական բացվածք :

Քաղաքացի Սվետլանա Վլադիմիրի Սվազյանի լիազորված անձ Համետ Արամի Սվազյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ ինքնական շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սվետլանա Վլադիմիրի Սվազյանի լիազորված անձ Համետ Արամի Սվազյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունվարի 3-ին N 62-2023 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սվետլանա Վլադիմիրի Սվազյանին(ծնված 1962 թվականի օգոստոսի 18-ին) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հ.Ավետիսյան փողոց N 44/1 հասցեի հողամասում ինքնական կառուցված 36.49(երեսունվեց ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինություններ, ինքնական բացված 1(մեկ) լուսամուտ, 1(մեկ) բացվածքի ձևափոխված դուռ, լուսամուտ, 1(մեկ) բացածքի ձևափոխված դուռ, 2(երկու) դռան ձևափոխված լուսամուտ, 1(մեկ) լուսամուտի ձևափոխված դուռ, 2(երկու) ինքնական բացված դուռ, 2(երկու) ինքնական փակված դուռ, 2(երկու) ինքնական բացված լուսամուտ, 1(մեկ) ինքնական բացվածքը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 114618(հարյուր տասնչորս հազար վեց հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սվետլանա Վլադիմիրի Սվազյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



24.03.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ